



**ԱՄՆ Բնակարանային Շինարարության և Քաղաքային
Զարգացման Դեպարտամենտ**

Հանրային և Հնդկացիների բնակարանային շինարարության գրասենյակ

**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՐՏՔԵՐԸ ԵՎ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄՆԵՐԸ**

Գործավարության կրճատման ծանուցում. Երկու տեղեկության հավաքագրման համար պահանջվող հանրային հաշվետվության ծանրաբեռնվածությունը գնահատվում է, որ միջինում կկազմի 7 թույլ՝ յուրաքանչյուր պատասխանի համար: Դա ներառում է նաև այն ժամանակահատվածը, որի ընթացքում պատասխանողները կընթերցեն և կհաստատեն փաստաթուղթը, ինչպես նաև որևէ գրանցում կկատարեն: Այս տեղեկությունը կօգտագործվի վարձակալությունը ձևակերպելիս: Տվյալ տեղեկության հարցման պատասխանը պահանջվում է նպաստներ ստանալու համար: Գործակալությունը կարող է չհավաքել այս տեղեկությունները, և Դուք պարտավոր չեք լրացնել այս ձևաթուղթը, եթե այն չի պարունակում Վարչական և բյուջեի կառավարման գրասենյակի (OMB) ընթացիկ վավերական համարը: OMB համարն է 2577-0266, որը վավերական է մինչև 31/08/2016թ.:

ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ HUD-Ի ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԾՐԱԳՐԵՐԻ ԴԻՍՈՂՆԵՐԻ ԵՎ ՍԱՄԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Հանրային Բնակարանային Շինարարություն (Public Housing) (24 CFR 960)
- 8-րդ Հոդվածով նախատեսված Բնակարանային Պայմանի Ընտրության Հավաստատոմս (վաուչեր)(Housing Choice Voucher), այդ թվում՝ Աղետի դեպքում Բնակարանային Աջակցության Ծրագիր (Disaster Housing Assistance Program) (24 CFR 982)
- 8-րդ Հոդվածով նախատեսված Չափավոր Վերականգնում (Moderate Rehabilitation) (24 CFR 882)
- Նախագծային Հավաստատոմս (վաուչեր) (24 CFR 983)

ԱՄՆ Բնակարանային Շինարարության և Քաղաքային Զարգացման Դեպարտամենտը (HUD) վարում է ազգային տվյալների բազա՝ Հանրային Բնակարանային Շինարարության Գործակալություններին (Public Housing Agencies (PHAs)) կամ 8-րդ Հոդվածով նախատեսված սեփականատերերին վճարման ենթակա պարտքերի վերաբերյալ, ինչպես նաև HUD-ի վարձակալության աջակցության վերը նշված ծրագրերից որևէ մեկում իրենց մասնակցությունը կամավոր կամ ոչ իրենց կամքով դադարեցրած մասնակիցների վերաբերյալ հակընդդեմ տեղեկություն: Այդ տեղեկությունը պահպանվում է HUD-ի Ձեռնարկությունների Եկամտների Հավաստագրման (Enterprise Income Verification (EIV)) համակարգում, որն օգտագործվում է Հանրային Բնակարանային Շինարարության Գործակալությունների (PHAs) կողմից և նրանց կառավարման գործակալների կողմից՝ ծրագրի մասնակիցների զբաղվածության և եկամտների վերաբերյալ տեղեկությունները հավաստելու, ինչպես նաև վարչարարական և վարձակալության աջակցության վճարների հետ կապված սխալները նվազեցնելու նպատակով: EIV համակարգը նախատեսված է աջակցելու PHAs-ներին և HUD-ին, որպեսզի վերջիններս կարողանան HUD-ի վարձակալության աջակցության ծրագրերում ընտանիքների մասնակցությունն ապահովել, ինչպես նաև սահմանել վարձակալության աջակցության այն ճշգրիտ գումարը, որին իրավասու է ընտանիքը: Բոլոր PHAs-ները պարտավորված են օգտագործելու տվյալ համակարգը՝ HUD-ի կանոնակարգերի համաձայն, նախատեսված 24 CFR 5.233-ով:

HUD-ը պահանջում է, որպեսզի վերը նշված վարձակալության բնակարանային ծրագրեր վարող PHAs-ները որոշակի տեղեկություններ զեկուցեն՝ HUD-ի վարձակալության բնակարանային ծրագրերում Ձեր մասնակցության ավարտին: Տվյալ ծանուցմամբ Դուք տեղեկացվում եք այն մասին, թե PHA-ն ի՞նչ տեսակի տեղեկություն է պարտավորված տրամադրել HUD-ին, թե ու՞մ է հասանելի այդ տեղեկություն, թե ինչպե՞ս է օգտագործվում այդ տեղեկություն, և որոնք են Ձեր իրավունքները: PHAs-ները պարտավոր են տրամադրել տվյալ ծանուցումը բոլոր դիմորդներին և ծրագրի մասնակիցներին, և Դուք պարտավոր եք հաստատել տվյալ ծանուցման ստացումը՝ ստորագրելով էջ 2-ը: Տնային տնտեսության յուրաքանչյուր չափահաս անդամ պետք է ստորագրի տվյալ ձևաթուղթը:

Ի՞նչ տեսակի տեղեկություն է HUD-ը հավաքագրում PHA-ից Ձեր և Ձեր վարձակալության վերաբերյալ.
Տվյալ տեղեկությունը հավաքագրվում է Ձեր տնային տնտեսության յուրաքանչյուր անդամի վերաբերյալ (ընտանիքի կազմը). լրիվ անունը, ծննդյան տարեթիվը և Սոցիալական Ապահովության համարը:

Հետևյալ հակընդդեմ տեղեկությունը հավաքագրվում է, երբ Ձեր մասնակցությունը բնակարանային ծրագրում դադարեցվում է, անկախ այն հանգամանքից, թե Դուք տեղափոխվել եք աջակցվող կառույցից կամավոր կամ անկախ Ձեր կամքից:

% չ D< 5! ;! fl) SSSSSZ

. fl # E Z Z

2. Արդյո՞ք Դուք կնքել եք վերավճարման համաձայնագիր Ձեր կողմից PHA-ին վճարման ենթակա գումարի մասով; և
3. Արդյո՞ք Դուք խախտել եք վերավճարման համաձայնագիրը; և
4. Արդյո՞ք PHA-ը դատալծիո ունի ընդդեմ Ձեզ, և
5. Արդյո՞ք Դուք ներկայացրել եք սնանկ ճանաչվելու հայտ; և
6. Ձեր մասնակցության դադարեցման վերաբերյալ բացասական պատճառ(ներ), կամ որևէ բացասական կարգավիճակ (օրինակ՝ լրված կառույց, խարդախություն, վարձակալության խախտումներ, քրեական գործունեություն, և այլն) մասնակցության ավարտի ամսաթվի դրությամբ:

Ու՛մ է հասանելի հավաքագրված տեղեկությունը.

Տվյալ տեղեկությունը հասանելի կլինի HUD-ի աշխատակիցներին, PHA-ի աշխատակիցներին, ինչպես նաև HUD-ի և PHAs-ների կապալառուներին:

Ինչպե՞ս կօգտագործվի տվյալ տեղեկությունը.

PHAs-ներին հասանելի կլինի տվյալ տեղեկությունը վարձակալության աջակցության համար դիմելու և ընտանիքի եկամուտի և ներկայիս կազմի վերստուգման ժամանակահատվածում: PHAs-ները պետք է հասանելիություն ունենան ա յո տեղեկությանը, որպեսզի կարողանան որոշել ը նտանիքի համապատասխանությունը սկզբնական կ ամ շարունակական վ արձակալության աջակցության համար, և խուսափել սահմանափակ Դաշնային վարձակալության աջակցությունը տրամադրել այնպիսի ընտանիքներին, որոնք նախկինում չեն համապատասխանել HUD-ի ծրագրի պահանջներին: Եթե զեկուցված տեղեկությունը ճշգրիտ է, ապա PHA-ը կարող է դադարեցնել Ձեր ընթացիկ վարձակալության աջակցությունը և մ երժեղ Ձ եր հ ետագա հ այցը HUD-ի վարձակալության աջակցության համար՝ ելնելով PHA-ի քաղաքականությունից:

Որքա՞ն ժամանակ է EIV համակարգում պահպանվում վճարման ենթակա պարտքի և դադարեցման վերաբերյալ տեղեկությունը.

Վճարման ենթակա պարտքի և դադարեցման վերաբերյալ տեղեկությունն EIV համակարգում կպահպանվի տաս (10) տարվա ընթացքում՝ սկսած մասնակցությունը դադարեցնելու օրվանից:

Որո՞նք են իմ իրավունքները.

1974թ. Գաղտնիության մասին Դաշնային Օրենքի (Federal Privacy Act of 1974) համաձայն, ինչպես փոփոխված է (5 USC 552a) և HUD-ի կանոնակարգերով՝ իր կողմից 1974թ. Գաղտնիության մասին Դաշնային Օրենքի կատարման մասով (24 CFR Մաս 16), Դուք ունեք հետևյալ իրավունքները.

1. Հասանելիություն ունենալ HUD-ի կողմից տնօրինվող Ձեզ վերաբերող գրառումներին՝ ելնելով 24 CFR Մաս 16-ի պահանջներից:
2. Պահանջել HUD-ի կողմից տնօրինվող Ձեզ վերաբերող գրառումներին Ձեր հասանելիությունը սահմանափակող՝ HUD-ի սկզբնական մերժման վարչական վերանայում:
3. Ուղղել Ձեր գրառումներում առկա սխալ տեղեկությունը՝ գրավոր դիմումի հիման վրա:
4. Ներկայացել բողոքարկման հայտ՝ գրառումների ուղղման կամ փոփոխմանն առնչվող սկզբնական հակընդդեմ որոշման մերժման վերաբերյալ, գրավոր մերժման հրապարակումից հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
5. Բացահայտել Ձեզ առնչվող գրառումները երրորդ անձանց՝ Ձեր կողմից գրված և ստորագրված դիմումի ստացման հիման վրա:

Ի՞նչ ես պետք է անեմ, եթե ես վիճարկում եմ իմ մասին զեկուցված պարտքի կամ պարմանագրի դադարեցման վերաբերյալ տեղեկատվությունը՝

Եթե Դուք համաձայն չեք զեկուցված տեղեկության հետ, ապա պետք է գրավոր դիմեք այն PHA-ին, որը զեկուցել է Ձեզ վերաբերող այդ տեղեկությունը: PHA's-ների անվանումները, հասցեները և հեռախոսահամարները նշված են Վճարման ենթակա Պարտքեր և Դադարեցումներ զեկուցում (Debts Owed and Termination Report): Դուք իրավունք ունեք PHA-ից պահանջել և ստանալ այդ զեկուցյի կրկնօրինակը: Տեղեկացրե՛ք PHA-ին, թե ինչու եք Դուք վիճարկում այդ տեղեկությունը, ինչպես նաև ներկայացրեք ցանկացած փաստաթուղթ, որը կհիմնավորի Ձեր բողոքը: HUD-ի գրառումները պահպանելու վերաբերյալ քաղաքականությունների համաձայն՝ ելնելով 24 CFR Մաս 908-ի և 24 CFR Մաս 982-ի պահանջներից, նախատեսված է, որ PHA-ը կարող է ոչնչացնել Ձեզ վերաբերող գրառումները՝ ծրագրում Ձեր մասնակցության դադարեցման օրվանից սկսած երեք տարվա ընթացքում: Ձեր գրառումների հասանելիությունն ապահովելու նպատակով, սկզբնական պարտքի կամ դադարեցման վերաբերյալ բողոքները պետք է ներկայացվեն գրավոր՝ մասնակցության դադարեցման օրվանից սկսած երեք տարվա ընթացքում. հակառակ դեպքում պարտքի և դադարեցման վերաբերյալ տեղեկությունը կհամարվի ճշգրիտ: Գրառումների ոչնչացումը կամ ուղղումը կարող է կատարվել միայն այն PHA-ի կողմից, որը Ձեր մասին հակընդդեմ տեղեկություն է զեկուցել:

Ձեր կողմից սնանկ ճանաչվելու վերաբերյալ հայտի ներկայացումը չի հանգեցնի վճարման ենթակա պարտքի կամ դադարեցման վերաբերյալ տեղեկության հեռացմանը HUD-ի EIV համակարգից: Այնուամենայնիվ, եթե Դուք այդ պարտքը ներկայացնում եք Ձեր սնանկության հայտում և/կամ այդ պարտքը համարվում է մարված՝ սնանկության ճանաչման մասին դատարանի որոշմամբ, ապա Ձեր գրառումը կթարմացվի՝ սնանկության գործոնը ներառելու նպատակով, երբ Դուք PHA-ին տրամադրեք Ձեր սնանկության կարգավիճակը հաստատող փաստաթղթերը:

<p>Տվյալ ծանուցումը տրամադրվել է ստորև նշված PHA-կողմից:</p>	<p>Սույնով ես հաստատում եմ, որ PHA-ը տրամադրել է ինձ PHA-ին Վճարման Ենթակա Պարտքի և Դադարեցման մասին ծանուցումը՝</p>
	<p>Ստորագրություն Անսաթիվ</p> <p>Անունը սպասառ</p>